Ս.ՇՏԻԿՅԱՆ

ՌՈՒՍ-ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Շատ էլ վաղուց չէ, ինչ ռուս և հայ ժողովուրդների հոգևոր մշակույթների առնչության հարցերով սկսել են զբաղվել այդ երկու ժողովուրդների մտավորականության ներկայացուցիչները։ Ռուսական պարբերականներում հանդես եկած՝ վերոհիշյալ բնույթն ունեցող հոդվածների վաղեմությունը չի անցնում 19-րդ դարի սկզբներից։ Այս հանգամանքը առաջին հայացքից առավել ևս զարմանալի է թվում այն պատճառով, որ, ինչպես վկայում են պատմական աղբյուրները, ռուսները Հայաստանով, հետևաբար և հայ ժողովրդով սկսել են հետաքրքրվել անհամեմատ ավելի վաղ, դեռևս 17-րդ դարի կեսերից։ Սակայն ռուսական իշխանություններին ինչպես այն ժամանակ, այնպես էլ հետագա տարիներին, Հայաստանն առաջին հերթին հետաքրքրում էր ստրատեգիական և մարտավարական տեսանկյունից, որովհետև միջին Արևելքում զարգացող քաղաքական և ռազմական իրադարձությունները հրամայաբար դնում էին նախ այդ բնույթի հարցերի պահանջը։ Եվ միայն 19-րդ դարի սկզբներին, երբ Հայաստանի մի մասը, ազատագրվելով թուրք-պարսկական բռնապետությունից, ընդմիշտ միացավ Ռուսաստանին, իսկ օրակարգում դրված էր ամբողջ հայության ազատագրության հարցը, հող ստեղծվեց նրա հոգևոր կուլտուրայի ուսումնասիրության համար։ Ռուս-հայկական գրական-բանասիրական կապերին նվիրված՝ վերջին տարիներս հրատարակված մի շարք աշխատությունների շարքում (Կ. Գրիգորյան «Բրյուսովը և հայ պոեզիան», Ս. Արեշյան «Հայ մամուլը և ցարական գրաքննությունը», Գ. Հովնան «Ռուս-հայկական գրական հարաբերությունները 19-րդ դարում» և այլն) ուշադրության արժանի է Զվարթ Ղուկասյանի «Ռուս-հայ գրական կապերը նախահեղափոխական շրջանում» ուսումնասիրությունը։

Վերլուծել նախահեղափոխական շրջանի ռուս-հայկական գրական կապերը, նախ և առաջ նշանակում է լավ ծանոթ լինել երկու ժողովուրդների՝ տվյալ շրջանի գրական-պատմական պրոցեսների գոնե հիմնական, բնորոշ էտապներին։ Այդ առավել ևս բարդ է Ղուկասյանի նպատակադրած ժամանակաշրջանի՝ 19-րդ դարի համար, որի սահմաններում հայ և ռուս ժողովուրդների գրականությունները ունեցել են էական տարբերություններ։ Այն դեպքում, երբ ռուսական գրականության մեջ աստիճանաբար մեռնում էր կլասիցիզմը, բնականոն ձևով իր տեղը զիջելով գրական հաջորդ ուղղությանը՝ ռոմանտիզմին, հայ գրականության մեջ գրական այդ երկու ուղղությունները հանդես էին գալիս միատեղ ու միաժամանակ։ Այն դեպքում, երբ 19-րդ դարի ռուս գրականությունը զարգանում էր միաձույլ ու ամբողջական, առանց որևէ հատվածավորումների, հայ գրականությունը ավելի ու ավելի էր շարունակում փեռեկտվել արևելահայ, ռուսահայ, հնդկահայ և այլ հատվածների, որոնցից յուրաքանչյուրը իր հետ գրականություն էր բերում միայն իրեն բնորոշ առանձնահատկություններ։ Եվ վերջապես, այն դեպքում, երբ ռուս գրական-հասարակական գործիչների համար, նույնիսկ ցարական ռեակցիայի ամենածանր պայմաններում անգամ, անծանոթ էր ֆիզիկական ոչնչացման սպառնալիքը, հայ մտավորականներին ամբողջ 19-րդ դարի ընթացքում ամենուրեք ու մշտապես հետապնդել է «Բնաջնջումի արնաշուրթ ուրվականը», որն առավել բնորոշ դրսևորվեց սուլթան Համիդի գործունեության մեջ և այլն։

Այս և այլ կարգի բազում խնդիրներ են, որոնք, անշուշտ, ծառացած են եղել Ղուկասյանի առջև, իր աշխատությունը գրելու ընթացքում և գոհունակությամբ պետք է արձանագրել, որ նա հիմնականում կարողացել է հաղթահարել այդ դժվարությունները։ Այդ մասին է վկայում աշխատության «Հայ գրականության հարցերը ռուսական մամուլում մինչև 1916 թվականը», «Հայ գրականության ժողովածուն Գորկու խմբագրությամբ», «Բրյուսովը հայ պոեզիայի մասին» և այլ

գլուխները, որոնք ամենևին էլ այդքան հաջողված չէին ստացվի, եթե հեղինակն իր համար մինչև վերջ պարզած չլիներ գրական-պատմական ու հասարակական այն պրոցեսների բովանդակությունը, որոնց մի քանիսի մասին նշեցինք վերևում։

Աշխատության հաջողությանը մեծապես նպաստել է նաև այն հանգամանքը, որ Ղուկասյանը մանրակրկիտ պրպտումներ է կատարել ժամանակի բոլոր թերթերում ու ամսագրերում, ուսումնասիրել է մի շարք արխիվային փաստաթղթեր և հավաքել է, առաջին հայացքից նույնիսկ երկրորդական թվացող այն բոլոր տեղեկություններն ու փաստերը, որոնք կարող էին գեթ փոքր չափով օգտակար լինել իրեն։ Այս աշխատանքն ամենևին էլ հեշտերից չէ այն պատճառով, որ ռուս մտավորականները հայ մշակույթի մասին իրենց հոդվածներն ու ուսումնասիրությունները հրատարակել են ժամանակի ամենաբազմազան պարբերականներում, ուր հանդես են եկել Նեկրասովան, Զյումինան, Շերվինսկին, Մառը, Բրյուսովը, Յուրի և Ալեքսեյ Վեսելովսկիները, Լունաչարսկին և շատ ուրիշներ։ Հասկանալի է, որ այս բոլորի հայտնաբերման և ուսումնասիրության հետ կապված աշխատանքները լուրջ դժվարություն էին ներկայացնում և գոհունակությամբ պետք է արձանագրել, որ Ղուկասյանը կարողացել է հաջողությամբ գլուխ բերել գործը։ Դրա հետևանքով գիրքը դարձել է փաստալից, հագեցած նոր ու թարմ տեղեկություններով, որոնք ավելի են բարձրացնում նրա արժեքը (տե՛ս՝ էջ 48-54, 77-82, 165-176 և այլն)։

Ճիշտ և խրախուսելի է հեղինակի դիրքորոշումը Նիկողայոս Մառի գրական-բանասիրական ժառանգության գնահատման հարցում։ Վերջին տարիներին հանիրավի դատապարտված Նիկողայոս Մառը, շնորհիվ սովետական ու մեր լեզվաբանների ջանադիր աշխատանքի, աստիճանաբար վերականգնվում է իր դերի ու իրավունքների մեջ։ Եվ գրականագետ Ղուկասյանը համարձակորեն գալիս է իր ձայնը միացնելու այդ ազնիվ աշխատանքին։ «Այն

ռուս նշանավոր գիտնականը, որ 1890-ական թվականներից սկսեց հայ հին և միջնադարյան գրականության ու կուլտուրայի, ճարտարապետության լայն ու խոր հետազոտությունը ... Նիկողայոս Յակովլևիչ Մառն էր» (էջ 13) գրում էր Ղուկասյանը, և Մառին տրված այս ու հետագա գնահատականների հետ չի կարելի չհամաձայնել։

«Ռուս-հայ գրական կապերը նախահեղափոխական շրջանում» աշխատությունն, այսպիսով, կարելի է դասել մեր գրականագիտության հաջողված ուսումնասիրությունների շարքը, չնայած նրանում առկա մի քանի թերություններին։ Այդ թերությունների վրա էլ կամենում ենք հրավիրել հեղինակի ուշադրությունը։

Հասկանալի է ու տրամաբանորեն պատճառաբանված առաջին պլան Գորկուն ու Բյուսովին մղելու հեղինակի միտումը, որպես ռուս-հայկական գրական կապերի ուսումնասիրության գործի առավել խոշոր պրոպագանդիստների։ Սակայն, չգիտես ինչու, շատ քիչ տեղ է հատկացված այս ասպարեզի մյուս նշանավոր դեմքին՝ Յուրի Վեսկովսկուն։ Վերջինիս մասին Ղուկասյանը խոսում է գրքի առաջին՝ ընդհանուր-տեսական գլխում, այդտեղ էլ արվում են մի քանի ամենաընդհանուր դիտողություններ և դրանով էլ ամեն ինչ վերջանում է։ Այնինչ հանրահայտ է, որ հայագիտական բնույթ ունեցող իր գրական-հասարակական ակտիվ գործունեությամբ, իր բազմաթիվ ուսումնասիրություններով, նվիրված Խաչատուր Աբովյանին, Ռաֆֆուն, Մկրտիչ Պեշիկթաշլյանին, Ռափայել Պատկանյանին, Պետրոս Դուրյանին, Հակոբ Պարոնյանին, ուսումնասիրություններ, որոնցից շատերը մինչև այսօր էլ մեծ արժեք են ներկայացնում, Վեսկովսկին լիակատար իրավունք էր նվաճել շատ ավելի մեծ տեղ գտնել աշխատության մեջ, քան նրան հատկացրել է Ղուկասյանը։

«Ռուս-հայկական գրական կապերը նախահեղափոխական շրջանում» աշխատության մեջ կա «Բրյուսովը և սիմվոլիզմը. Բրյուսովը արվեստի մասին» գլուխը, ուր Ղուկասյանը նշում է, որ Բրյուսովը իր գիտական ուղին սկսել է որպես դեկադենտ-սիմվոլիստ, տրվում է այս ուղղության բնութագիրը, բացահայտվում է գրողի գեղագիտական հայացքների էվոլյուցիան, նաև այն, որ մինչև վերջ էլ նա չկարողացավ ճիշտ դիրքերի վրա կանգնել, քննված է հեղափոխության թողած ազդեցությունը Բրյուսովի վրա և նրա նոր վերաբերմունքը դեպի սիմվոլիստներն ու նրանց տպագիր օրգան հանդիսացող «Նոր ուղի» ամսագիրը, և այլն, և այլն։ Այդ ամենը ճիշտ է ու լավ, բայց հարց է ծագում, սա ինչ կապ ունի ռուս-հայկական գրական կապերի հետ։ Մի՞թե տալով ռուսական դեկադենտականության բնութագիրը կամ վերլուծելով Բրյուսովի ու սիմվոլիստների գրական ազդեցությունները, Ղուկասյանը կարծում է, որ դրանով նոր խոսք է ասում ռուս-հայ գրական կապերի վերաբերյալ։ Ասվածից պարզ է, որ հիշյալ գլուխը լինելով ինքնին հաջողված ու ամբողջական, ոչինչ ընդհանուր չունի «Ռուս-հայ գրական կապերը նախահեղափոխական շրջանում» խորագիրը կրող աշխատության հետ, և որպես այդպիսին պետք է որ տեղ գտած չլիներ այնտեղ։

Եվ վերջապես, մի դիտողություն էլ տեքստաբանական բնույթի։ Աշխատության մեջ օգտագործված մեջբերումները, հոդվածների վերնագրերը մեծ մասամբ կատարված են անփույթ ու անխնամ, լի բազմապիսի վրիպակներով։ Բավական է ասել միայն, որ 177-րդ էջում մեջ է բերված մի հատված Նարեկացու «Տաղ յարութեան»-ից, և յոթ տողանոց այդ հատվածի մեջ առկա է 18 սխալ։ Նման օրինակներ կարելի է էլի բերել։ Կարիք կա՞ ասելու, որ այս հանգամանքը ամենևին էլ չի խոսում հօգուտ գրքի և առավել ևս՝ հեղինակի, որի գիտական աշխատանքի մեջ նման անփութությունը պարզապես անթույլատրելի է։

Գրական թերթ, 1962, օգոստոսի 10